

ՊԱՐՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԱՍԻՆ

2. 2. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հայտնի է, որ ազգային գրականությունների փոխազդեցության հնուց դուրս ռուսական ունեցող պրոցեսում միշտ առանձնապես մեծ է եղել այն գրականությունների, այն գրողների ու երկերի դերը, որոնք գեղարվեստական կատարյալ կերպարներով արտացոլել են գրականության առաջադիմական երևույթները, նպաստել են դեպի հասարակական հարաբերությունների բարձր ձևերը իրենց ժողովրդի կատարած առաջընթացին:

Սկսած 1940-ական թթ. դարերի անցյալ ունեցող հայ-պարսկական զբաղվող գրականությունները թևակոխում են պատմական նոր փուլ: Իրանում, զխավորապես Թեհրանում հրատարակվող մի շարք թերթեր, ինչպես «Մասդաթի բաշար» («Ժողովրդի երջանկություն»), «Աթա» («Կրակ»), «Մարդում» («Ժողովուրդ»), «Սոուգանդ» («Երգում»), Սեթարեյե սուհա («Խաղաղության առաքել»), «Փայամե նավին» («Նորագույն պատգամ»), «Արմաղան» («Պարզ»), «Սոխան» («Խոսք»), «Խուշ» («Հասկ») և այլ գրական ամսագրեր ու թերթեր, մեծ սիրով ու պատրաստակամությամբ են տպագրում հայ բանաստեղծների ստեղծագործությունները:

Պարսիկ նշանավոր բանաստեղծներ ու գրականագետներ Նաբեր Նաբերփուրը, Սայեն, Բամդադը, Բ. Իմամին, Թեմուր Գորգինը, Ահմադ Նուրիդդեն և ուրիշներ, գնահատելով հայ հեղինակների ստեղծագործական բարձր սրվեստը, հանդես եկան մամուլի էջերում:

Ստորև ներկայացնում ենք մամուլից քաղված գնահատականները:

Երեք հարյուր տարի է, որ հայերն ապրում են Իրանում, սակայն դժբախտաբար, մինչև այժմ լուրջ նպատակադրում չի եղել պարսիկ ժողովրդին ծանոթացնելու հայ պատմությանը, մշակույթին, լեզվին ու գրականությանը: Իրոք, շատ ուրախալի է, որ մի խումբ պարսիկ ու հայ մտավորականներ ձեռնամուխ են եղել այդ շնորհակալ գործին: Մի գործ, որը աստիճանաբար պարսիկ ժողովրդին հնարավորություն կտա գաղափար կազմելու հայ դրականության մասին:

«Փայամե նավին» («Նորագույն պատգամ»),
ամսագիր, Թեհրան, 1964, № 8, էջ 80:

Հայ բանաստեղծների համեմատությունը մեր վերջին հիսնամյակների բանաստեղծների հետ զարմանահրաշ տարբերություն է հայտնաբերում: Հայ բանաստեղծները, որոնք ծնվել են մի տարաբախտ ազգի ծոցում, թեկուզ դարեր շարունակ ապրել են գերության մեջ, այնուամենայնիվ չեն դադարել պայքարելուց: Եթե որևէ աչքի ընկնող հայ բանաստեղծի կյանքն ու գործը ուսումնասիրվի, կարգվի, որ դա հանուն ազատության հայ ժողովրդի հերոսական պայքարի մեկ դրվագն է: Մենք ոչ մի ճանաչված հայ բանաստեղծ չգիտենք, որի սիրտը չի տրոփել իր հայրենիքի վեհության և իր ազգի առաջադիմության սիրտը...:

«Խաբ վա խուն» («Հող և արյուն»),
ամսագիր, Թեհրան, 1967, № 303:

Ավետիք Իսահակյանի «Արու-լալա-Մահարի» պոեմի տպագրումը «Արմաղան» ամսագրի էջերում գրավեց բովանդակ աշխարհի, հայ գրողների և մամուլի ուշադրությունը: Մենք ևս մեր հերթին ողջունում ենք հայ մամուլին,

շնորհապարտ ենք զգում մեզ և խոստանում ենք, որ մեր հնարավորության սահմաններում կներկայացնենք հայ գրականությունն ու հայ գրողներին, որոնք այնքան սիրողներ ու համակրողներ ունեն իրանի հասարակության մեջ:

«Սևփիդ վա սիյահ» (Մպիտակ և սև),
ամսագիր, Թեհրան, 1968, № 28, էջ 7:

Չնայած հնամենի հայ ժողովուրդը գարեր շարունակ եղել է մեր հարևանը և պատմական սերտ կապեր է ունեցել մեր երկրի հետ, սակայն պատշաճ կերպով չի կարողացել իր երկուհազարամյա անցյալ ունեցող գրականության հետ ծանոթացնել մեզ: Ինչ էլ որ լինի պատճառը, իրականությունն այն է, որ այդ ուղղությամբ կատարված քայլերը դեռևս աննշան և չնչին են, և մեր ժողովուրդը լիակատար ծանոթ չէ այնպիսի մի առաջավոր մշակույթի և գրականության հետ, որոնցով կարող է հպարտանալ հայ ժողովուրդը:

«Սոխան» («հոսք»), գրական ամսագիր,
Թեհրան, 1969, № 8, էջ 55:

Որտեղ հայ բանաստեղծություն տեսնեք, մի պահ կանգ առեք և նախքան ընթերցելը մտովի պատկերացրեք տանջանք, գերություն, կրակ, արյուն, պայքար և, վերջապես, դրանց հետ միաժամանակ՝ ամենահիասքանչ ազատություն բառերը: Որովհետև ամեն մի հայ բանաստեղծության մեջ դուք կզգաք նրա հորինողի՝ կյանքի խոր և միևնույն ժամանակ անաղարտ ու ինքնատիպ ընկալումը:

Որտեղ հայ բանաստեղծություն տեսնեք, կանգ առեք, խորհրդածությամբ մտածեք, որովհետև հայ բանաստեղծությունը կանգնած է իր դարավոր անցյալի փառապանծ ու անսասան պատվանդանի վրա:

Որտեղ հայ բանաստեղծություն տեսնեք, կանգ առեք, խորհրդածությամբ մտածեք և հետո հպարտությամբ լցված ընթերցեք այն: Որովհետև հայ ժողովուրդը միշտ էլ մշակույթի և գիտության գովերգողն է եղել և նրանց զարգացման համար չի խնայել իր ուժերը:

Չե՞ որ դարերի խորքից մեզ հասած «Աստվածաշնչի» հայերեն սքանչելի թարգմանությունը ստացել է «Թարգմանությունների թագուհու» համբավը:

Հայ բանաստեղծությունը ամբողջությամբ վերցված մարդկային խոհերի, հույզերի ու զգացմունքների գեղարվեստականորեն կախարդիչ արտահայտություն է:

Հայ բանաստեղծությունը երբեք կյանքի մակերեսին թրթռացող խոսք չէ, որովհետև հայ բանաստեղծը կյանքին խորաթափանց նայելուց զատ, ուրիշ նպատակ չունի:

Եթե այցի ես գնում հայ բանաստեղծությանը, նախքան գնալ՝ հաշվի առ, դու ներս ես մտնելու ամբողջ աշխարհով մեկ սփռված հինգ միլիոնանոց հայ ժողովրդի լեզվի և գրականության տաճարը: Ուրեմն զգուշ, որ մշակույթի և գրականության վեհությունն ու փառքը չդողացնեն սիրտդ և զարմանքը չպատի քեզ:

Հայ բանաստեղծությունը դա տառապյալ, սակայն մի առաջադեմ ժողովրդի բանաստեղծություն է: Մի ժողովուրդ, որը խոհուն է և ստեղծագործ: Մի ժողովուրդ, որի նվիրական կյանքն ու արվեստը երբեք թույլ չեն տվել, որ «սնանկությունը» ոտք դնի իրենց վսեմության սեմին¹:

¹ Այս գնահատականների հեղինակն է ականավոր պարսիկ գրականագետ Թեմուր Գորգինը: Տե՛ս «Համամասնի անդուհ» («Վշտի դուցազներգություն»), Հայ բանաստեղծության հատընտիր, Թեհրան, 1968, առաջաբան, էջ 6—7:

Հայ բանաստեղծությունը դա ժողովրդի հոգևոր ճիւղն է: Մի ժողովրդի, որը երկար ժամանակ, առանց որևէ հարուցող պատճառի, տանջվել է անզգամ ու գարշելի մարդկանց ճիրաններում: Մի ժողովուրդ, որը դեռևս հազար վեց հարյուր տարի առաջ գրում էր այսօրվա իր տառերով և ունեւ հարուստ մշակույթ և գրականություն:

«Խուշ» («Հասկ»), երկշաբաթյա հանդես:

Հայ բանաստեղծության մեջ մենք ականատես ենք լինում պայքարի ու սխրանքների, տեղեկանում հայ ժողովրդի իղձերին ու ձգտումներին: Մի ժողովուրդ, որը հաճախ ենթարկվել է ցեղասպանության: Մի ժողովուրդ, որը լավ է ըմբռնում «սեր» և «մտերմություն» բառերի իմաստը: Մի ժողովուրդ, որ պատմության ընթացքում բոլոր անիրավությունները ճաշակելուց հետո պահպանել է իր ազգային նկարագիրը, մշակույթն ու բանահյուսությունը:

«Քեյհան» («Աշխարհ»), օրեր:

Հայ բանաստեղծությունը ազնիվ է ու մարդասիրական: «Օտարությունը», «վիշտը», «մեռականությունը» առանձնահատուկ տեղ են գրավում հայ բանաստեղծության մեջ: Հայ բանաստեղծությունը նորելուկ չէ: Նա ունի խոր արմատներ, իսկ հայ բանաստեղծը իր շրջապատի մարդկանց համար օտարոտի չէ, այլ ապրում է նրանց մեջ: Ասում են. ամեն մի հայի մեջ մի բանաստեղծ է նստած: Այս խոսքի ճշմարտությունը մենք ընկալում ենք այդ ազգի անկեղծության մեջ:

Էթնիկաթ (Լուրեր):

Մեզ, իրանցիներիս համար, որ դարեր շարունակ շփման մեջ ենք եղել հայ ժողովրդի հետ և առնչվել նրա ծննդավայրի հետ, կատարյալ անհրաժեշտություն է դառնում նաև նրա մշակույթի իմացությունը: Քանի որ ամեն մի ազգի մշակույթի և գրականության հետ ծանոթանալն է, որ խորը և մտերմ փոխըմբռնում է առաջ բերում ազգերի միջև:

«Ջանե ուղ» («Այսօրվա կինը»):

Հայ գրականությունը. թափառական, սակայն զգացմունքով լի մի ժողովրդի գոյության ամենաերևելի փաստաթուղթն է: Ժողովուրդ, որ պատմական իրադարձությունների բովում միշտ էլ ապացուցել է իր գոյությունը, միաժամանակ գտնելով ազատ շնչելու ուղիներ: Եվ այդ փաստաթղթերի ընդերքում հայ բանաստեղծությունը ունի վսեմ գիրք:

«Քեյհան» («Աշխարհ»):

Հայ բանաստեղծը հարազատ զավակն է մի ժողովրդի, որի կյանքի պատմությունը ցավի, տանջանքի, արյան ու տառապանքի գիրք է: Մի ժողովուրդ, որի կյանքի փորձությունը, առանձին վերցրած, աշխարհի քաշած տառապանքի ամբողջությունն է կազմում, որովհետև այն արհավիրքը, որ այլ ազգեր ճաշակել են առանձին-առանձին, հայ ժողովուրդը տեսել է համատեղ: Զափազանցություն չի լինի, եթե ասելու լինենք, որ հայ ժողովուրդը իր պոեզիայով ողջ մարդկության բերանով զայրույթի կոչ է արել բռնության դեմ և գեղության ճիրաններում պայքարել է գերության դեմ:

«Ռուսաֆեր» («Լուսամիտ»), ամսագիր:

Հայ բանաստեղծությունը մարդկության մնայուն երդն է՝ պատմության դաժանությունների դեմ և ազգերին ու ժողովուրդներին միմյանց միացնելու խորհրդանշանը: Հայրենի երկրից անջատվածությունը և այն զրկանքները, որ

պատմության ընթացքում ճաշակել է այդ ժողովուրդը, մի տեսակ թախծոտ երանգ են հաղորդել նրա քնարերգությանը²:

«Ձանե հուզ» («Այսօրվա կինը»):

Բացի հայ պոեզիայի մասին տված ընդհանուր այս գնահատականներից, պարսիկ գրական միտքը շատ ուրույն ասպեկտով է քննարկել նաև հայ բանաստեղծների աշխարհայացքը, նրանց ըմբոստաշունչ ու կենսատենչ, բայց միևնույն ժամանակ հումանիստական ուղղությամբ տոգորված պոեզիան:

Հիշատակենք այդ փաստերը:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Չարենցը, հեղափոխական այդ բանաստեղծը, իր կյանքը շինայեց ազատությանը և նոր պոեզիայի կատարելությանը հասնելու համար: Անկարելի է մոռանալ Չարենցի անհատականությունը: Այսօր, երբ մեսրոպյան լեզուն և նարեկացու մատենագրությունը պայծառ կերպով շողշողում են հայ գրականության սյուսմության ճակատին, Չարենցի ոգին՝ իր անմահ ստեղծագործություններով շարժման մեջ է հավիտենականության առանցքի շուրջը: Նա հայրենիքի և իր ժողովրդի սիրո մարմնացումն է: Չարենցի պոեզիայի ազդեցությունը անսահման և անմոռաց է ամբողջ հայության համար:

Չարենցը իր կենսաբեր պաթոսով և անսպառ սիրո զգացմունքներով բանաստեղծական մի հոյակապ սիմֆոնիա ստեղծեց և այդ ներդաշնակ սիմֆոնիայի միջոցով նվաճեց աշխարհային հասնելու հաղթունին, արժանանալով ազգին և հեղափոխական բանաստեղծի կոչմանը:

«Խուշ» («Հասկ»), Լրկշարայի հանդես,
Իսկրուն, 1967, № 39, էջ 7:

Մինչև այժմ վերլուծական բազմաթիվ աշխատություններ են գրվել և դեռ էլի կգրվեն Չարենցի գործերի գեղարվեստական արժեքի ինքնատիպ առանձնահատկության մասին, սակայն այն, ինչ կարելի է մի խոսքով ասել Չարենցի մասին, այն է, որ հայ ժողովրդի վսեմ գրականությունը չի կարելի պատկերացնել առանց Չարենցի շլացնող պայծառության:

Անադ Նուրի-ղադե, Եղիշ Չարենց, «Սորուհայե սորիս»
(«Կարմիր երգեր»), Թեհրան, 1979, էջ 4:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Իսահակյանի պոեզիայի ընդերքը անհատակ խորություն ունի: Նրա «Դարդը սրտիս» երգը հայրենիքից հեռու ընկած թափառական ու հայրենատենչ յուրաքանչյուր հայի «անձնագիրն» է: Հանճարեղ քնարերգուի ստեղծագործության մեջ տեղ գտած որոշակի ատելությունը... ուղղված է մարդկության թշնամիների հասցեին...:

«Համասեյե անդուհ» («Վշտի դուցազներգություն»), Հայ
բանաստեղծության հատընտիր, Թեհրան, 1968, էջ 25:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Թումանյանի քառյակներն իրենց խոր փիլիսոփայական խոհերով կարելի է համեմատել պարսիկ դասական բանաստեղծներ Օմար խայամի, խաքանու և Հաֆեզի քառյակների հետ:

² Հայ պոեզիայի վերաբերյալ այս վերջին յոթ գնահատականները տպագրվել են Իրանում հրատարակվող մամուլի էջերում: Սակայն մենք դրանք թարգմանաբար ներկայացնում ենք

Անուշի և Սարույի նվիրական սերը կարելի է նմանեցնել «Լեյլի և Մեջնուն» և «Յուսեֆ և Զուլեյխա» պոեմներին:

Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները վերածվեցին կյանքի և կրակի: Կյանքի վերածվեցին, որ ապրեն հավիտյան, կրակի վերածվեցին, որ պեսզի այրեն հասարակության մեջ բույն գրած մակաբույծներին:

«Անուշը» հորինող Թումանյանը, հայ բանաստեղծության մի հարուստ շտեմարան է: Նա ստեղծագործում է հստակ ու ճշմարիտ: Յուրաքանչյուր երկ ստեղծագործելիս, նրա ոգին ճախրում է ամպերից էլ վեր, ծիածանից էլ բարձր, որպեսզի կյանքը դարձնի ավելի անաղարտ, ավելի անբիծ...:

Ք. Իմամի, «Էթթելաթ» («Լուրեր»),
Թեհրան, 1969, № 13036:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

...Շիրազը սովետական շրջանի անմահության արժանացած մեծագույն հայ պոետներից է: Նրա յուրաքանչյուր երկ, ստեղծվելուց առաջ, մկրտվում է որոշակի նպատակով: Այդ նպատակը ոչ այլ ինչ է, եթե ոչ ճանապարհ դեպի լուսավոր ապագա:

Շիրազի բանաստեղծությունը ծնվելուց հետո դարաշրջանի մթնոլորտը հագեցնում է բուրմունքով, իսկ արվեստագետի խոսքը, աշխարհի որ անկյունում էլ լինի, դարձնում հմայող ու կախարդիչ: Շիրազի բանաստեղծական մի տողը արժեքավոր մի գրքի հանդեպ կարող է հզոր ու անսասան մնալ: Նրա «Բիրլիականը», որը պարսկերենով վերանվանվել է «Վշտի դուցազներգություն», կարելի է համարել աշխարհի ամենավսեմ պոեմներից մեկը:

«Էթթելաթ» («Լուրեր»), Թեհր, 1969, № 13036:

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Անցյալը, ներկան և գալիքը երեք կողմից ներթափանցել են հայ պոեզիայի բովանդակության մեջ՝ պարզեցնելով նրան քնարական առանձնահատուկ որակ և անզուգական ներշնչանք: Դանիել Վարուժանը անկեղծորեն գալիք օրերի գեղեցկությունն է տեսնում:

Իր պոեզիայով նա երբեք չի հեռանում ժամանակից ու մարդուց: Սարսափն ու բարին, ճշմարտությունն ու կեղծիքը նա համատեղ վերցնում է մարդուց և ներկայացնում հենց իրեն՝ մարդուն: Դանիել Վարուժանի ստեղծագործության հայելում կյանքն է արտացոլված իր անհատնում շարժման պաթոսով, որը, անգամ մահից հետո, կյանք է պարգևում մեռյալներին:

Եթե խոսքը, իմաստը և պատկերը բանաստեղծության բնորոշ առանձնահատկություններից են, ապա Դանիել Վարուժանը այդ առանձնահատկությունների համապարփակ խտացումն է: Դանիել Վարուժանը ձգտում է ցուցադրել մարդկային հոգու մաքրությունը: Նա ուզում է ասպետի պես աներկյուղ արշավել մինչև պոեզիայի կատարելության սահմանները, արդարությունն ու անաղարտությունը անկաշկանդ երգելու համար:

«Էթթելաթ» («Լուրեր»), 1972, № 13775:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Պարույր Սևակը իր դարաշրջանի բանաստեղծն է, դարաշրջան, որը, նրա կարծիքով, ամենամեծ քննադատն է, իսկ ամենից շատ քննադատվողը ինքը՝ բանաստեղծը:

1972 թ. Թեհրանում լույս ընծայված «Մադարանի դար ադարի արմեն» («Մայրականը հայ դրականության մեջ») հայ բանաստեղծությունների հատընտիրում բերված պարսկերեն ընդգրկից (էջ 1—4):

Պարույր Սևակին քննադատությունն է դարձրել բանաստեղծ և ոչ թե դավասանների շոյալությունը: Նա իր ժամանակի զավակն է, իր դարի ունկընդիրը: Այն դարաշրջանը, որը ձուլված է երկաթի, ծխի, հրետանու, դինամիտի և ատոմի խառնուրդով:

«Էթեռնաթ» («Լուրեր»), Բեռլ, 1969, № 13036:

Պարույր Սևակի բանաստեղծությունների մեջ մարտնչորեն են հայ ժողովրդի ճակատագիրն ու պատմությունը: Ես սիրում եմ նրա երկերի ընդերքում շառաչող անհանդսությունն ու հարձակողական համարձակությունը:

Մոնշի-զադե, Պարույր Սևակ «Ավայն խամուշ նաշոգանիյն նազուս» («Անլուռի զանգակատուն»), Բեռլին, 1978, անաշարան:

ПЕРСИДСКАЯ ПЕЧАТЬ ОБ АРМЯНСКОЙ ПОЭЗИИ

Г. О. МОВСИСЯН

Резюме

Начиная с 40-х гг. нашего столетия армяно-персидские литературные связи вступили в новую стадию своего развития. По требованию времени, среди гениальных произведений крупнейших представителей мировой литературы, персидская литературно-общественная мысль полюбила и высоко оценила богатство армянской классической, западноармянской, а также армянской поэзии советского периода. В это время, до середины 70-х гг., персидская периодическая печать с особым вниманием обратилась к армянской поэзии, печатая как произведения армянских поэтов, так и отклики и высказывания, отмечавшие их художественные особенности.